

Ստեղծագործական աշխատանքներ
արհեստական բանականության գործիքներով,
որոնք կարող են կատարել դասարանում

Հետազոտությունները վկայում են, որ այսօր բոլոր ոլորտներում շատ մեծ է հետաքրքրությունը **OpenAI**-ների աշխատանքի, հատկապես՝ **ChatGPT**-ի նկատմամբ: Արհեստական բանականության գործիքները դարձել են ամենօրյա գործունեության արդյունավետ ու ստեղծարար բաղադրիչ նաև կրթության ոլորտում:

Ներկայացնում ենք մի քանի պարզ գաղափարներ, որոնք կարելի է փորձարկել դասարանում՝ օգտագործելով **ChatGPT**-ն այլ գործիքների հետ համադրած:

1. Բարձրաձայն ընթերցանության նյութերի ստեղծում

Գործիքներ՝




ChatGPT + ElevenLabs

- Գրեք պատմություն, բանաստեղծություն կամ բացատրական տեքստ ChatGPT-ում:
- Օգտագործեք ElevenLabs՝ այն ձայնային ֆայլի վերածելու համար:

Օգտագործեք տեքստը խոսքի վերափոխելու միջոցով ուսումնական լսողական նյութեր պատրաստելու համար:

2. Քայլ առ քայլ ուսուցողական նյութերի մշակում

Գործիքներ՝



ChatGPT + Canva կամ Riverside

- Ուղղորդված հարցման միջոցով ստեղծեք հստակ հանձարարականներ կամ քայլաշար ChatGPT-ում:
- Ներկայացրեք տեսաշարով կամ վիզուալ նյութով Canva-ի կամ Riverside-ի միջոցով:

Հարմար է տեխնոլոգիական հմտությունների ուսուցման կամ մեղիա ստեղծագործական նախագծերի համար:

3. Գնահատման սանդղակների (ռուբրիկների) ստեղծում

Գործիքներ՝



ChatGPT + Canva

- ChatGPT-ում ձևակերպեք գնահատման չափանիշներն ու նկարագրությունները:
- Canva-ի օգնությամբ ձևավորեք դրանք գնահատման ռուբրիկների, աղյուսակների տեսքով:

Օգտագործեք գնահատման թափանցիկությունն ու արդյունավետությունը բարձրացնելու համար:

4. Կրթական խաղերի ստեղծում

Գործիքներ`



ChatGPT + Canva կամ Scratch

- Ստեղծեք հարցեր, առաջադրանքներ կամ պատմություններ ChatGPT-ի միջոցով:
- Դրանք օգտագործեք Canva-ում` խաղային քարտեր ստեղծելու կամ Scratch-ում` ինտերակտիվ խաղ ծրագրավորելու համար:

Զարգացնում է համագործակցային և ստեղծագործական հմտությունները:

5. Դասարանական վիզուալ նյութերի պատրաստում

Գործիքներ՝



ChatGPT + Midjourney

- ChatGPT-ով ստեղծեք կրթական հասկացությունների, նյութերի նկարագրություններ:
- Օգտագործեք Midjourney՝ վերածելու այդ նկարագրությունները գրավիչ նկարագարողումների, պատկերների:

Օգտակար է հատկապես վիզուալ ուսումնական միջավայր ստեղծելու համար:

6. Տպելու համար աղյուսակների, աշխատանքային թերթիկների ստեղծում, գեներացում

Գործիքներ՝





ChatGPT + Canva Docs կամ Google Slides

- ChatGPT-ի օգնությամբ կազմեք առաջադրանքների, աղյուսակների, ձևաթղթերի բովանդակությունը:
- Չնավորեք դրանք Canva Docs-ում կամ Google Slides-ում՝ հեշտ տպելու համար:

Օգտագործվում է դասապատրաստման նյութերի արագ կազմման համար:

7. Սովորողների հետադարձ կապի հաշվետվությունների ստեղծում

Գործիքներ՝



ChatGPT + Google Forms + Google Docs

- Տեղադրեք աշակերտների պատասխանները ChatGPT-ում՝ ավտոմատ հետադարձ կապ ստանալու համար:
- Համադրեք արդյունքները և կազմեք հաշվետվությունը Google Docs-ում:

Աջակցում է ձևավորող գնահատմանն ու անհատական մոտեցմանը:

8. Բառարանային ֆլեշքարտերի ձևավորում

Գործիքներ՝




ChatGPT + Quizlet կամ Flippity

- ChatGPT-ով ստեղծեք տերմիններ, սահմանումներ ու օրինակներ:
- Ներմուծեք դրանք Quizlet կամ Flippity հարթակ՝ ինտերակտիվ ուսուցողական բառաքարտեր ստանալու համար:

Օգտակար է լեզվաբառարանային հմտությունների զարգացման համար:

9. Ձևավորող գնահատման առաջադրանքների մշակում

Գործիքներ՝



ChatGPT + Google Forms

- ChatGPT-ում ձևակերպեք կարճ հարցեր կամ հուշումներ (պրոմպտեր):
- Տրամադրեք դրանք Google Forms-ի միջոցով:

Արագ և պարզ տարբերակ է՝ ստուգելու գիտելիքները ընթացիկ փուլում:

Եզրափակիչ մտքեր

Սա ընդամենը մեկնարկային ցանկ է. յուրաքանչյուր գաղափար կարող է հարմարեցվել ուսումնական միջավայրին, աշակերտների կարիքներին և ուսուցման ոճին:

ԱԲ-ն ոչ թե փոխարինում է ուսուցչի ստեղծագործական կարողությունները, այլ ընդլայնում է նրա հնարավորությունները: